10. Հաստատուում է ընդհանուր-նահանգապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտօն, որպիսի պաշտօնին նշանակուում է հայ:

11. Քաղաքացիական մասի օգնականի պաշտօնի համար հայկական համագումարը ներկայացնում է Ադրբէջանի կառավարութեան երկու թեկնածու, որոնցից մէկը հաստատուում է:

12. Ղարաբաղի հայերը վայելում են մշակութային ինքնավարութեան իրաւունք:

13. Մշակութային ինքնավարութեան իրաւունքը կիրառուում է Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի կողմից, որը ընտրուում է Ղարաբաղի հայերից պարբերաբար հրաւիրուող համագումարներում: Համագումարը հրաւիրում է Ազգ. Խորհուրդը:

14. Ադրբէջանի Հանրապետութեան կառավարութիւնը հակակշռում է Հայոց Ազգային Խորհրդի գործունէութիւնը հայ լիազօրների միջոցով:

15. Զօրամասերը կենում են Խանքենդում և Շուշիում, խաղաղ ժամանակւայ կազմով:

16. Զօրամասերի ամէն տեղափոխում Ղարաբաղի, Շուշի, Զիվանշիր և Զիբրայիլ դաւառների լեռնային հայաբնակ մասերում կարող է կատարուել խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնութեամբ:

17. Քաղաքական համոզումների համար ոչ ոք չի կարող հետապնդման ենթարկուել ոչ դատական, ոչ էլ վարչական կարգով:

18. Քաղաքական պատճառներով մեկնելու հարկադրուած բոլոր հայերը իրաւունք ունեն վերադառնալու իրենց տեղերը:

19. Ղարաբաղում դադարեցուում է հայ և մահմեդական բնակչութեան զինաթափումը մինչև Ղարաբաղի հարցի որոշելը Հաշտութեան Վեհաժողովում:

Ծանօթութիւն. Քանի որ ամբողջ Ադրբէջանում յայտարարուած է զինաթափութիւն, խօսք կարող է լինել միայն դադարեցման մասին:

20. Ադրբէջանի Հանրապետութեան կառավարութիւնը ցոյց է տալիս նիւթական և բարոյական աջակցութիւն Ղարաբաղի ազգաբնակութեան՝ մահմեդական ու հայ քանդուած գիւղերը շուտով վերականգնելու համար:

21. Միջազգային յարաբերութիւնները աւելի լաւ կարգաւորելու նպատակով խորհուրդը պարբերաբար հրաւիրում է հայ-մահմեդական ընդհանուր և տեղական համագումարներ:

22. Միութիւնների, խօսքի ու մամուլի կատարեալ ազատութիւն: Իսկ ժողովները, քանի որ ամբողջ Ադրբէջանում տիրում է զինուորական դրութիւն, արգելուում են վարչութեան կողմից:

23. Մանաւոր և պաշտօնատար անձանց բոլոր յանցագործութիւնները հետապնդուում են դատական եղանակով, բացի Պետական Պաշտպանութեան Կոմիտէի 1919թ. յունիս 11-ի պարտադիր որոշումով ընդհանուր դատաստանական ենթակայութիւնից հանուած յանցանքներից:

24. Մինչև այժմ տեղի ունեցող միջազգային ընդհարումներին մասնակցելու համար ոչ ոք չի ենթարկուում պատասխանատուութեան:

25. Սոյն համաձայնութիւնը ուժի մէջ է մտնում Ղարաբաղի Հայոց 7րդ համագումարի ընդունած վայրկեանից:

26. Սոյն համաձայնութիւնը իր ուժի մէջ է մնում բոլոր դէպքերում՝ պաշարողական, զինուորական և այլն: